



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«27» 02 2020թ.

N 20-14

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ԵՎ
ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ, ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԵՎ
ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասով, 26-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 32-րդ հոդվածի 7-րդ մասով, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և 7-րդ մասով, ինչպես նաև «Պետական տուրքի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 16-րդ և 34-րդ հոդվածի 3-րդ մասերով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով քաղաքաշինության բնագավառի գործունեությունների տեսակներով լիցենզավորող հանձնաժողովի 2020 թվականի փետրվարի 25-ի որոշումը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Տրամադրել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակներով զբաղվելու համար՝ 15 իրավաբանական անձանց շինարարության իրականացման լիցենզիա և թվով 18 ներդիր, 1 իրավաբանական անձի քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության լիցենզիա և թվով 1 ներդիր (համաձայն հավելված 1-ի):
2. Տրամադրել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակներով զբաղվելու համար՝ 1 իրավաբանական անձի շինարարության իրականացման թվով 1 ներդիր, 2 իրավաբանական անձանց քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության թվով 2 ներդիր (համաձայն հավելված 2-ի):

3. Փոփոխել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակներով զբաղվելու համար՝ 3 իրավաբանական անձանց շինարարության իրականացման թվով 3 ներդիրը (համաձայն հավելված 3-ի):

4. Դադարեցնել ուժը կորցրած ճանաչելու միջոցով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված 2 իրավաբանական անձանց շինարարության իրականացման լիցենզիայի և 2 ներդիրի գործողությունը (համաձայն հավելված 4-ի):

5. Վերաձևակերպել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակներով զբաղվելու համար՝ 2 իրավաբանական անձանց շինարարության իրականացման 2 լիցենզիան և թվով 2 ներդիրը, 1 իրավաբանական անձի քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման թվով 1 ներդիրը (համաձայն հավելված 5-ի):

6. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետի պաշտոնակատար Նշան Մարտիրոսյանին՝

1) «Պետական տուրքի մասին» օրենքի համաձայն լիցենզիան հանձնել լիցենզավորված անձանց՝ համապատասխան տարեկան պետական տուրքի վճարման դեպքում:

2) Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի, սույն հրամանի պատճենը երեք օրվա ընթացքում պաշտոնական հրապարակման համար ուղարկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

Պարտականությունները կատարող՝

27.02.2020

X 

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ